ստացանք գալ և համբուրել քո ոտքերի հողերը: Վեց օրվա ճանապարհ եկանք, իսկ խանը մարդ ուղարկեց, մեզ հետ վերադարձրեց և բանտարկեց: Մեր պատճառով բոլոր մեծամեծներին բռնեց, տուգանեց, և ամբողջ երկիրը գնաց օսմանցիների կողմը նրա ագահության պատճառով: Իսկ մենք փախուստով ազատվեցինք, եկանք ձեր ոտքերը: Եթե արժանի եմ մահվան, իմ արյունը թող քո շներին կերակուր լինի: Այս և այլ, ինչ պակաս էր թողել, բոլորը գրեց: Դրա հետ դրեց թագավորի հրամանագիրը և եպարքոսի ձեռքով, որի անունն էր Շխալի խան, ուղարկեց շահին: Շահը տեսնելով արքունի հրամանը, ասաց՝ եթե թուրքերի թագավորը մերը սիրում է, մենք ինչո՞ւ չսիրենք (կաթողիկոսին), մանավանդ, որ Սաֆի խանը այդքան չարիքներ է հասցրել նրան:

Նրան հիշեցրին նաև այլ գանգատավորների խոսքերը: Այնտեղ էր նաև լեզգիների խանը, նա նույնպես ասաց՝ Սաֆի խանը այնքան ապրանք ուղարկեց իր տունը, որ ես երեք հարյուր թուման մաքս առա, չհաշված բեռների մաքսը: Շահը այս լսեց և հրամայեց գրել Թավրիզ՝ Միրզա Իբրահիմին, որին կոչում էին Հատրբեջան Վազրի, որ գնա Երևան, Սաֆի խանին ու նրա որդի Մեհուբ Ալի անունով որդուն բռնի, կապի և նրա տունը ավարի, մինչև իսկ կանանց վարտիքները ևս հանի և իրեն ու իր որդուն կապանքներով ուղարկի Ղալայի Գուլաբի, որ Վարդաջրի բերդն էր:

Կապելով նրան հանձնեց Բայադ Աբաղին, որի մասին նախապես գրեցիք, դև կնոջ հետ միասին: Ոմն Սարուխան շահի կողմից ուղարկվեց, նստեցրեց այնտեղ տեղապահ, մինչև որ խանը գա: Բայց երբ շահի հրամանը հասավ Միրզա Իբրահիմին, սա իր հետ վերցրեց յոթ մարդ ևս, գնացին հասան մինչև Շարուրի դաշտը և լսեցին, որ խանը Կոտայքում է՝ բազմաթիվ աղբյուրների գլխին: Նրանք Գառնիի վրայով գնացին գաղտնի և ելան մի բլրի գագաթը և նայելով նշանեցին վրանը և ուղղություն վերցնելով գնացին, մտան վրանը, այնտեղ ոչ ոք չկար, բացի միայն մի փոքրիկ մանուկից, որ խաղում էր նրա հետ (խանի): Նրանք ութն էլ բարձրացրին լախտերը (այսինքն՝ թոփուզները) և պարզեցին նրա վրա՝ ասելով՝ շահի կալանավորն ես, չշարժվես: Նա ասաց՝ լավ, ինձ ցույց տվեք շահի հրամանը: Նրանք հանին (հրամանը), տվին նրան: Նա առավ համբուրեց և դրեց գլխի վրա: Եվ երբ կարդաց, ձեռքը դրեց

ձեռքի վրա և ասաց՝ կապեցեք: Նրանք մոտեցան, մերկացրին նրան, ձեռքերը կապեցին հետևը և ոտքերը շղթայեցին: Նրա մանուկ որդին լալիս էր: Ասացին՝ մի լար. մեկը մնաց այնտեղ, իսկ յոթը գնացին կանանց վրանը. նրանց ճվճվալով, չղչղալով, ճղալով, ոռնալով, հայհոյելով, աղաղակելով դուրս հանին: Իսկ թուրքերը մերկացրին նրանց թանկագին հանդերձները և հագցրին այլ հանդերձներ, դրեցին ուղտերի վրա, ուղարկեցին Երևան: Երկու մահմեդական շտապեցին բերդը և փակեցին դռները ու նրա ամեն ինչը հարքունիս գրեցին: Այլ բաներն էլ արին այնպես, ինչպես գրեցինք:

ԳԼՈՒԽ ԽԳ
ՇԱՀ ՍՈՒԼԵՅՄԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Փոքր Շահ Աբասից հետո թագավորեց նրա որդի Շահ Սաֆին մի տարի: Սրանից հետո թագավորեց Շահ Սաֆիի եղբայր Շահ Սուլեյմանը 1117 (1668) թվին: Բայց սրա մասին ասում են, թե Շահ Սաֆին ինքն է, բայց այլ անուն ուներ: Երբ թագավորեց անվանեցին պապի անունով՝ Շահ Սաֆի: Հենց իր թագադրության սկզբում իսկույն տկարացավ: Ասաց՝ այս անունը ինձ համար ճիշտ չեղավ: Անունը փոխեցին և դրեցին Սուլեյման: Իսկ ոմանք էլ ասացին, թե սա Շահ Սաֆին չէ: Երբ Շահ Սաֆին դարձավ շահ, սկսեց պիղծ շնություն անել: Բռնի կերպով բերել էր տալիս մեծամեծ իշխանների կանանց և նրանց հետ շնանում էր:

Մի օր բռնությամբ տարավ մի ինչ-որ իշխանի կնոջը, կինը չէր կամենում: Այդ պատճառով կինը մի փոքրիկ դանակ գաղտնի դրեց իր ծոցը և գնաց: Երբ շահը մերձեցավ կնոջը, նա իբրև Հուդիթ արեց երկրորդ Հողեփեռնես, դանակը խրեց կոկորդը և այդպես սատկեցրեց*. ինքը դուրս եկավ, ասաց կանանց ներքինիներին՝ այժմ պատվեցի ձեր շահին ըստ իր արժանիքի: Այս ասաց, ելավ ու աներկյուղ գնաց: Ներքինիները մտան տեսան, որ թավալվում էր արյան մեջ, և գաղտնի կորցրին նրան: Եվ բերելով նրա Սուլեյման եղբորը՝ թագավորեցրին: Արդ՝ սուտ է, թե ճիշտ, մենք այսպես լսեցինք ու գրեցինք:

* Յուդիթ ԺԳ 7: